Անդամավճարների վերաբերյալ պարզաբանող նամակ

31.07.2012 00:00

::jseblod::article::/jseblod::
::panel_article:: ::/panel_article::
::wysiwyg_introtext::

Հարգելի փաստաբաններ,

Ինչպես գիտեք, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, հանդիսանալով "Փաստաբանության մասին" ՀՀ օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, իր առջև ունի մի շարք խնդիրներ, որոնց իրագործման համար Պալատն իր գործունեությունն ապահովում է հիմնականում անդամ-փաստաբանների կողմից վճարվող անդամավճարների հաշվին: Հետևաբար, Պալատի գործունեության համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը կամ սղությունը բերելու է որոշ խնդիրների իրագործման անհնարինությանը կամ ոչ որակյալ իրականացմանը:

Նկատի ունենալով, նոր կազմավորվող փաստաբանության զարգացմանը խթանելու անհրաժեշտությունը, Պալատը քաղաքական որոշում էր կայացրել փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանել 3.000 (երեք հազար) ՀՀ դրամ, որն, ըստ էության, չի **<u>բավականացնում</u>** Պալատն անհրաժեշտ կադրերով համալրելու և որոշ գործառույթներ իրականացնելու համար:

Ինչպես գիտեք, Օրենքի փոփոխությունների/լրացումների համաձայն, Պալատը պետք է հիմնադրի նաև փաստաբանական դպրոց (հիմնադրամի կարգավիճակով): «Փաստաբանական դպրոց» հիմնադրամն արդեն ստեղծված է, որը պետք է կազմակերպի նաև փաստաբանների վերապատրաստումը, ինչը պետք է անցկացվի վճարովի հիմունքներով:

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, ինչպես նաև <u>փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը</u>, ինչպես նաև դրանք վճարելու կարգը*:

«Փաստաբանական դպրոց» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ն.Բաղդասարյանի կողմից 28.04.2012թ. տրված տեղեկանքի համաձայն, մեկ փաստաբանի վերապատրաստման ինքնարժեքը մեկ տարվա համար կազմում է 24.000 ՀՀ դրամ, իսկ ամսական՝ 2000 ՀՀ դրամ: Սա վերապատրաստման ինքնարժեքն է, ինչը կարող է որոշ հարկային հավելումների արդյունքում ավելանալ:

Պալատի խորհուրդը որոշում է կայացրել անդամավճարի չափը Պալատի ծախսերի համար թողնել նույնը, իսկ վերապատրաստման համար պարտադիր գումարը ավելացնել անդամավճարին, ինչը հնարավորություն կտա առավել կանոնավոր կազմակերպել այդ գումարների հավաքագրման գործընթացը և արդյունավետ կերպով տնտեսել ու կառավարել վերապատրաստման համար անհրաժեշտ ծախսերը, նախապես ծրագրավորել և հրապարակել դասընթացների թեմաները և գրաֆիկները: Հակառակ դեպքում, երբ փաստաբանները վճարումները կատարեն իրենց հարմար ժամանակում կամ գրանցվեն և չմասնակցեն, ինչը կբերի նրան, որ չեն ձևավորվի անհրաժեշտ խմբաքանակները, և վարձված դասախոսները ստիպված սահմանված կայուն գումարով առավել քիչ լսարանի առջև հանդես կգան, ինչի արդյունքում վերապատրաստման արժեքն անհարկի կբարձրանա:

Հուսով ենք, որ փաստաբանի բարձր իրավագիտակցությամբ կմոտենաք վերոհիշյալ հարցին ու կհարգեք Պալատի մարմինների որոշումները, որոնք ուղղված են փաստաբանության հեղինակության բարձրացմանը:

Բեռնել անդամավճարի և վերապատրաստման վճարի չափերը սահմանելու մասին որոշումը:

Բեռնել մուտքի վճարների, անդամավճարների և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգը:

Պալատի նախագահ՝

Ռուբեն Սահակյան

::/wysiwyg_introtext::
::wysiwyg_fulltext:: ::/wysiwyg_fulltext::
::panel_article_details:: ::/panel_article_details::
::panel_article_params:: ::/panel_article_params::
::panel_article_meta:: ::/panel_article_meta::
::panel_end:: ::/panel_end::
::jseblodend::::/jseblodend::

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })